

## Մամլո հաղորդագրություն

Անհապաղ թողարկման համար

18 ապրիլ 2014 թ.

Պատասխանատու՝ Արմինե Պետրոսյան

ՀՌԿԿ-Հայաստանի ծրագրերի ղեկավար  
Էլ.փոստ՝ [pmdi@crcc.am](mailto:pmdi@crcc.am), հեռ.՝ 574868

### Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանը հրապարակեց Կովկասյան բարոմետր 2013թ. հարցման հիմնական արդյունքները

**Հայաստանի Հանրապետություն, Երևան.** Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանը (ՀՌԿԿ-Հայաստան) հրապարակեց ամենամյա ընտրանքային հարցման՝ Կովկասյան բարոմետր 2013-ի հիմնական արդյունքները: Անցյալ տարվա աշնանը հարավկովկասյան երկրներում պատահականորեն ընտրված շուրջ 6000 տնային տնտեսություններում արված հարցումները հարուստ տեղեկատվություն են պարունակում Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում առկա սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և քաղաքական զարգացումների վերաբերյալ գոյություն ունեցող հանրային կարծիքի վերաբերյալ:

Ավելի քան 100 հարց պարունակող հարցաթերթով հավաքագրված տվյալները բացառիկ հնարավորություն են ընձեռում ոչ միայն հետևելու հանրային կարծիքի և յուրաքանչյուր երկրում կենսամակարդակի փոփոխություններին, այլ նաև վերլուծելու դրանք ըստ սեռի, տարիքի, բնակավայրի տեսակի և բազմաթիվ այլ փոփոխականների:

2013թ. հավաքագրված տվյալների միջոցով բացահայտված որոշ միտումներ կարևոր կիրառություններ կարող են ունենալ ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ տարածաշրջանում: Չորրորդ տարին անընդմեջ, գործազրկությունն ու աղքատությունը մատնանշվել են որպես հանրությանն առավել հուզող հարցեր Հայաստանում (45% և 16%, համապատասխանաբար) և Վրաստանում (54% և 10%), մինչդեռ Ադրբեջանում կարևորագույն խնդիրներ են համարվել նախ չլուծված տարածաշրջանային հակամարտությունները և ապա միայն՝ գործազրկությունը (38% և 25%):

Հայաստանում 68%-ը հավատացած են, որ մարդիկ իրավունք ունեն ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, մինչդեռ Ադրբեջանում այդպես է կարծում 52%-ը. Վրաստանում այս ցուցանիշը կազմել է 76%: Դրա հետ մեկտեղ, Հայաստանում 2013թ. նկատելիորեն ավելացել է երկիրը ոչ ժողովրդավարական համարող մարդկանց տոկոսը (34%, ի համեմատ 2012թ. 28%-ի և 2011թ. 27%-ի):

2013թ. հարցաշարը պարունակում է նաև նոր հարցեր, որոնք տրվել են հարավկովկասյան երեք երկրներում՝ տարածաշրջանային հակամարտությունների, մարդու իրավունքների ու դատական համակարգի, Ֆեյսբուք սոցիալական ցանցի և սոցիալական օժանդակության ծրագրերի վերաբերյալ: Բոլոր երեք երկրներում մարդիկ լավ տեղեկացված չեն հարևան երկրներում գոյություն ունեցող տարածաշրջանային հակամարտությունների մասին: Օրինակ, հայաստանցիների և ադրբեջանցիների մոտ կեսը չեն էլ լսել վրաց-արխազական հակամարտության մասին: Ղարաբաղյան հակամարտության ավելի քաջատեղյակ են Վրաստանում, որտեղ հարցվածների 62%-ն ասել է, որ լսել է այդ մասին: Իշխանությունների ազդեցությունից դատարանների անկախ լինելու մասին կարծիքը Հայաստանում կիսել են հարցվածների միայն 13%-ը, Ադրբեջանում՝ 25%-ը, Վրաստանում՝ 33%-ը: Ֆեյսբուք սոցիալական ցանցը բավականին տարածվելով՝ դեռևս չի դարձել հաղորդակցության առօրեական միջոց. Հայաստանում և Ադրբեջանում միայն յուրաքանչյուր յոթերորդն է շաբաթն առնվազն մեկ անգամ օգտվում Ֆեյսբուքից, իսկ Վրաստանում՝ յուրաքանչյուր հինգերորդը:

Կարծիքները Եվրասիական տնտեսական համագործակցություն-Մաքսային միությանը (ԵՏՀ-ՄՄ) և Եվրամիությանը (ԵՄ) անդամակցելու վերաբերյալ նույնպես տարբեր են երեք երկրներում: Իրենց երկրի անդամակցությանը ԵՄ-ին աջակցում է վրաստանցիների 65%-ը, հայաստանցիների 41%-ը, իսկ ադրբեջանցիների միայն 34%-ը: Հայաստանում ԵՏՀ-ՄՄ անդամակցելուն կողմ է 55 %-ը, իսկ Վրաստանում՝ 32%-ը:

Վերոնշյալի համատեքստում, երջանկության զգացման մակարդակը զարմանալիորեն շարունակում է մնալ բավականին բարձր. 1-10 սանդղակով գնահատելիս՝ Հայաստանում հարցվածների միջին երջանկությունը կազմել է 6.7 միավոր, Ադրբեջանում՝ 6.6, իսկ Վրաստանում՝ 7.0 միավոր:

Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու հանրային քաղաքականությունը զարգացնելու իր առաքելությանը հավատարիմ մնալով՝ ՀՌԿԿ ցանցը տրամադրում է տվյալների շտեմարանի ամբողջական փաթեթը և հարակից փաստաթղթերը, որոնք հասանելի են բոլորին [www.caucasusbarometer.org](http://www.caucasusbarometer.org) կայքում:

ՀՌԿԿ-Հայաստանը կարող է նաև հնարավորություն ընձեռել մամուլի ներկայացուցիչներին՝ մասնակցելու տվյալների շտեմարաններից և ռեսուրսներից օգտվելու վերաբերյալ կազմակերպվող դասընթացներին: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Արմինե Պետրոսյանին՝ վերոնշյալ էլ. հասցեով:

---

ՀՌԿԿ-Հայաստանն իր գործունեությունն սկսել է 2003 թվականին՝ որպես Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում հիմնված Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների ցանցի մի մաս: Երկար տարիներ զարգանալով Նյու Յորքի Կարնեգի կրթադրացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի ծանրակշիռ աջակցությամբ, 2013թ. կեսերից ՀՌԿԿ-Հայաստանը ստացել է անկախ հիմնադրամի կարգավիճակ՝ շարունակելով հետամտել հասարակագիտական հետազոտություններն ու հանրային քաղաքականության վերլուծությունը խթանելու հիմնական նպատակը:

**ՀՌԿԿ-Հայաստան.** Երևան 0025, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ գրադարանի մասնաշենք, 6-րդ հարկ, 602 սենյակ: Հեռ./ֆաքս +374 (10) 57-48-68, 57-48-98, էլ.փոստ՝ [crcc@crcc.am](mailto:crcc@crcc.am), կայք՝ [www.crcc.am](http://www.crcc.am): Վրաստանում և Ադրբեջանում ՀՌԿԿ գործունեության մասին հավելյալ տեղեկությունների համար այցելել [www.crcccenters.org](http://www.crcccenters.org):